



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 14

❖ ՇԱՐԱԹ ❖

1 ԱՊՐԻԼ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Տարեկան	50 ՂԲԸ	Տարեկան	54 ՂԲԸ	Տարեկան	12 ՖԲ.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

ՍԵՐՎԱԿԱՆԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՖ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՖ ժամացոյցները ջեքմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ թէ՛ Կ. Պոլիս, եւ թէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գումարացիք պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւ իրարմը պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Տ. Ասաճորյան) شرکت صتییه مطبعیه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառասէսի թիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
վիանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զժգոնութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոյն մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՆԱԿԱԹԱԳՈՐԾԱՆ
ՍԻՆԿԵՐԻ

ԲԵՐԱ.

(1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան , Թիւնէլի ետեւը .

(2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

(1. Սուլթան համամ .

(2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 .

ՍԿԻՒՏԱՐ

Չարչը Պօյու , թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւղօղլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԾ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնադրուած 1860 իւնի վիճակում

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Իրանագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ

ՀՐԴԵՂԻ ՃԻՒՂ

Իրանագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և
կարասիք :

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ :

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ չոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 11 — 16 :

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Կիսգոր Ընդհանուր
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 14

ԾԱԲԱԹ

1 ԱՊՐԻԼ 1906

ՋԱՏԻԿ Է

Երբայեցերէն Պասեք կամ Պասքա, Հայերէն Զատիկ : Երբայեցերէն բառը կը նշանակէ անցի կամ ելի . կը թուի թէ Հայերէն բառն ալ, գասիկ, յառաջ եկած է գասուիլ բայէն , ա՛յն մտօք թէ ինչպէս երբայեցիք Մովսէսի առաջնորդութեամբ Եգիպտոսէն ելան , քրիստոնեայք եւս Յիսուսի փրկագործութեան շնորհիւ զատուեցան , ազատուեցան մեղքի կապանքներէն : Աւետարանին մէջ մեր նախնիք Պասեք բառը թարգմանած են Զատիկ : Յիսուս երբ իր աշակերտները Երուսաղէմ կը ղրկէ , կը պատուիրէ անոնց որ իր ցոյց տուած մարդուն երթան ըսեն թէ վարդապետը ղրկեց մեզ , որպէս զի ձեր խոստացած տեղը տաք , ուր Զատիկը (Պասեքը) կատարէ իր աշակերտներուն հետ մէկտեղ : Փրանսերէն Pâques բառն ալ երբայեցերէն Պասքան է : Անցքի , ելքի , տօնը Յիսուսի Յարու-

թեամբ մեղքերէ ազատման տօնը եղաւ :

Նիսան ամիսը , որուն կը համապատասխանէ մեր Ապրիլը, սկիզբէն կամ Մարտի վերջին մէկ քանի օրերէն , գարնան ամիսն է : Բնութիւնը վերանորոգուած , ձմրան վարագոյրը բարձուած , ամէն կողմ կանանչ կակալ : Կա՛յ յարմարագոյն ամիս մը , Զատիկ տօնը իր խորհրդաւոր նշանակութեամբ կատարելու քան գարնանամուտի յաջորդող առաջին շաբաթները : Քրիստոնէութեան երկունքը պէտք էր կատարուէր ձմրան մէջ , մեղքերու թանձրութիւնը և հոգեւոր փրկութեան ծանրութիւնը ցոյց տալու համար . իսկ Քրիստոսի յաղթանակը , զոր իր յարութեամբ տարաւ խաւարին ու մեղքին վրայ՝ պէտք էր կատարուէր գարնան մէջ , որ յաղթեց ձմրան : Բեթղեհէմի այրին մէջ ապստամբ լուսաւորը

դարձաւ եղաւ կենդանարար արեւը, որ իր ճոխութիւնը կը սկսի ցուցադրել Ապրիլին, փարատելով մշուշները, մեղքին ստուերները: Աստուածային ճշմարտութեան ճառագայթները կը շողան արեւուն նիւթական ճառագայթներուն մէջէն, և կը տարածուին սփռւած քանքերով, հոգեւոր փրկութեան յոյս սերմանելով, ըղձաք մը խանդավառելով երկնային կեանքին ուղիւթեամբ: Քրիստոնէութեան ամէնէն մեծ երեք իրողութիւնները, թէ Քրիստոս Աստուծոյ որդին է, թէ մահուան երկիւղը փարատեցաւ անով, թէ ամէնքս անմահ կեանքի մը յոյսը ունինք, հաստատուած են Յարութեան վրայ, որ լրումն է՝ Քրիստոսի աշխարհային կենցաղին աստուածառաք յայտնութիւններուն:

Յարութեան վայրն է Գողգոթայի մօտ գտնուած պարտէզին գերեզմանը: Յիսուս գերեզման դրուած էր ուրբաթ կէս օրէ վերջ՝ հաւանաբար ժամը 10 ին: Գերեզմանը փորուած էր այն կողմերուն յատուկ կրային ապառաժին մէջ, որուն ծակոտկէն և ծծիչ յատկութիւնը թաղուած մարմինները չորցընելու բնութիւնը ունէր:

Այս է պատճառը որ այդ տեսակ գերեզմանները ռաբոֆած կը կոչուէին, որ կը նշանակէ «մարմին ուտող», և որ ապա ընդհանուր եղաւ բոլոր քարէ շինուած դազաղներուն համար: Գերեզմանին բերանը գոցուած էր խոշոր կլոր քարով մը, երկանաքարի նման: Այս քարը կնքուած էր և գերեզմանին շուրջ ալ պահապաններ կային: Յիսուսէն առաջ հոն մէկը թաղուած չէր, և ամէն նախդգուշութիւն ձեռք առնուած էր հաւաստի ըլլալու համար թէ Յիսուս իրօք մեռած էր, և թէ ոչ ոք

կրնար մարմինը վերցնել գերեզմանէն: Յիսուսի մարմինը այս գերեզմանին մէջ մնաց ուրբաթ կէս օրէ վերջ գրեթէ ժամը տասնէն մինչեւ կիրակի առաւօտ, արշալոյսին, այսինքն երեք օրերէն իւրաքանչիւրին մէկ մասը = 3 օր:

Հետեւեալ հաշիւը աւելի լաւ ցոյց կուտայ այս պարագան.

Ուրբաթ, ժամը 10էն մինչեւ

կէս գիշեր = 8 ժամ

Կէս գիշերէն մինչեւ շաբաթ

կէս գիշեր = 24 ժամ

Կէս գիշերէն մինչեւ կիրա-

կի առտու = 4 կամ 5 ժամ:

Աւետարանները կ'ըսեն երբեմն թէ Յիսուս յարութիւն պիտի առնէ «երրորդ օրը», և երբեմն ալ «երեք օրէն վերջ»: Մտթէոս երկուքն ալ կ'ըսէ, ցուցնելու համար թէ գործածուած բացատրութիւնը նոյնիմաստ է: Օրուան մը իւրաքանչիւր մնացեալ մասը մէկ օր կը հաշուուէր, ճիշդ ինչպէս որ Հին Կտակարանի պատմութեան մէջ տարւոյն մէկ մասը իբրեւ մէկ տարի կը հաշուուէր: Այսպէս, 1899 Դեկտ.էն մինչեւ 1901 Յունվ. երեք տարի կը հաշուուէր, թէեւ 13—14 ամիս է միայն: Այս է հաշիւը Հին Կտակարանին, Թաւմուտին, Յովսեփոսին և Ասորական տախտակներուն մէջ:

Կիրակի առաւօտ կանուխ քանի մը կիներ, որոնք նախորդ շաբաթ իրիկունը, ժամը 12էն վերջ, երբ այլ եւս հրէական հանգստի օրը աւարտած կը համարուէր, վաճառանոցէն անոյշ խոնկեր և իւլեր գնած էին, գերեզման փութացին բարեպաշտական պարտաւորութիւն կատարելու: Անցան այն ծառախիտ ու հովանաւոր ճամբէն, ուր Արեմաթացիին գերեզմանը ու պարտէզը կը գտնուէր, իւրաքանչիւրը իր

տրոփումն կուրծքին վրայ պինդ բռնելով անուշահոտ մթերքի բեռ մը: Հաւանական է որ իւրաքանչիւրը իր տունէն ճամբայ ելած էր տարբեր ուղղութեամբ գերեզմանին մէջ մեռնողին համար, այս է պատճառը որ Աւետարաններու պատմութեան մէջ թեթեւ տարբերութիւններ կը տեսնուին, չորս տարբեր պատմութիւններ միեւնոյն դէպքին վրայ: Տարբեր տեսակէտներով դիտած էին դէպքը, ինչպէս երբ չորս հոգի, սենեակի մը չորս անկիւնները կեցած, իւրաքանչիւրը կրնայ ամբողջ սենեակը տեսնել, բայց ի հարկէ իրենց նկարագրութիւնը աւերի ճշմարիտ կ'ըլլայ եթէ թեթեւ տարբերութիւններ և աննշան հակասութիւններ տեսնուին:

Ինչ մարմինով յարեալ Քրիստոս: Նոյն այն մարմնով որով մեռաւ խաչին վրայ: Անկարելի պիտի ըլլար ապացուցանել թէ Տէր Յիսուս մեռելներէն Յարութիւն առաւ, եթէ մարմինը թաղուելէն վերջ նոյնը չըլլար ինչպէս էր առաջ: Ինքնութիւնը պիտի չկրնար հաստատուիլ: Յիսուս մասնաւորապէս կ'աշխատի ցոյց տալ իր աշակերտներուն թէ ինք նոյնն է: Կը յայտարարէ թէ միս ու մարմին է, Թովմասին կ'առաջարկէ իր մատները խոթել գամին ծակերուն և նիզակին պատճառած վէրքին մէջ, անոնց առջեւ կ'ուտէ նոյն կերակուրը ինչպէս կ'ուտէր մեռնելէն առաջ:

Յիսուսի յարութիւնը պատմութեան մէջ ամէնէն լաւ կերպով վկայուած իրողութիւն մըն է: Քառասուն օրուան մէջ տասը կամ տասնը մէկ անգամ երեւցաւ մասնաւոր անհատներու կամ աշակերտներուն: Իր կեանքը և փըր-

կագործութեան ամբողջ յատակագիծը անկատար պիտի ըլլար առանց ասոր: Այդ քառասուն օրերուն Քրիստոսի մեծ ճիգն էր օգնել հասկցնելու իր աշակերտներուն թէ ինքն էր հոգեւոր Մեսիան, հոգեւոր Փրկիչը: Հարկ էր որ յաճախ երեւէր մինչեւ որ կատարեալպէս համոզուէին թէ ինք կենդանի էր և նոյն Յիսուսն էր ինչպէս անկէց առաջ ճանչցած էին, պէտք էր որ աշակերտներուն միջոցաւ ալ Քրիստոսեաները ըմբռնէին Յիսուսի աստուածային բնութիւնը և անոր հոգեւոր ներկայութիւնը, և տեսանելի ու անտեսանելի աշխարհներուն միջեւ անխնայելի կապակցութիւն մը գտնուիլ:

Յիսուս իր յարութեամբ կեանքը և անմահութիւնը լուսաւոր ըրաւ: Այսպէս յարութիւնը լայնութիւն և ընդարձակութիւն կուտայ կեանքին, մեր բոլոր ըրածները ազդեցութիւն մը և նշանակութիւն մըն ալ կ'ունենան գերեզմանէն անդին:

Վիքթոր Հիւկօ կ'ըսէ. — «Երբ գերեզման երթամ, ուրիշ շատերու հետ կրնամ ըսել. — «Աւարտեցի օրուան աշխատութիւնս», բայց չեմ կրնար ըսել. — «Վերջացուցի կեանքս»: Իմ օրական աշխատութիւնս նորէն պիտի սկսի հետեւեալ առաւօտ: Գերեզմանը կոյր ու անխօս վայր մը չէ, վաճառանոց մըն է: Ան կը գոցուի իրիկնամուտին, արշալոյսին հետ բացուելու համար»:

Թէօտոռ Մօնօ փափաք յայտնած էր որ իր գերեզմանաքարին վրայ գրուի. «Հոս կը վերջանայ առաջին դասը»:

Յիսուսի յարութեան մէջ, անոր մեռելներէն ելնելէն մինչեւ համբարձումը, մեր յարութեան վստահու-

թիւնը և նշանը կը գտնենք: Կոճղիկ մը կը տնկենք հողին մէջ, կ'ըսէ Սբեր-
ճըն, և անկէց կ'ենէ ոսկեգոյն եղրե-
ւանի մը: Հողի գուղձին մէջ սերմ մը կը
ցանենք, և կը բղխի անկէց հիւսնալի
ծաղիկ մը, շողշողուն գոյներով պայ-
ծաւերանգ: Ասոնք կը դնենք հողին
մէջ, նոյնն են, բոլորովին նոյն. —
բայց, ո՛հ, ո՛րքան տարբեր: Տ.

ՊԱՐՁ ԽՕՍՔԵՐ

ՆԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

ՀԻՒԱՆԳԱՆՈՅԻՆ ՄԷՋ

Գրիգոր էֆ: Վանքան, որ վերջերս Հի-
ւանդանոցի չլախտաւորներու բաժնին պետ
կարգուեցաւ, արդէն սկսած է օգտակար
թելադրութիւններ ւնել հոգեկան տառա-
պանքները մեղմացնելու համար այն արգա-
հատելի էականերուն, որոնք տօք. Մօնէէրիի
հոգածութեանը յանձնուած են: Ինչպէս
չատ անգամներ դիտել տուած է յարգելի
Տօքդորը, Հիւանդանոցի այն պատասպարեալ-
ները շատ պէտքեր ունին, զորս անհրաժեշտ
է լրացնել տակաւ, գիտութեան եւ բարե-
սիրութեան պահանջումներուն համաձայն:
Ուրախ ենք որ Վանքան էֆ. իր պաշտօնին
սէրն ու գիտակցութիւնը ունի եւ միշտ կը
խորհի օգտակար ըլլալ իր սահմանին մէջ:
Այս նպատակաւ ծրագիր մը պատրաստած
է, զոր պիտի ներկայացնէ Տնօրէնութեան,
խնդրելով երաժշտութեան հաստատումը Հի-
ւանդանոցի այս բաժնին մէջ: Իր ծրագիրը
չատ գործնական է: Կը փափաքի որ Որբա-
նոցին մէջ ջութակի դասախօսութիւն մը ըլ-
լայ եւ տղաքը, չարաթը քանի մը անգամ,
իրենց երաժշտական գործիքներով, հոգե-
կան անուշ հանդարտութիւն մը պարգեւեն
չլախտաւորներուն: Այս կերպով, թէ՛ Որ-
բանոցի տղաքը գեղարուեստի սէրը կ'ունե-
նան եւ թէ՛ մանաւանդ կարգ մը տարա-
բախտ էականեր երաժշտութեան անդորր վա-
յելքը կ'ըմբռնեն: Հիւանդանոցի Հոգա-
բարձու էֆ. ները, որոնք իրենց հոգածութեան
ապացոյցները կը շտապեն միշտ, անշուշտ լա-
ւագոյն ընդունելութիւն մը պիտի ընեն
Վանքան էֆ. ի այս առաջարկին, որ թէ՛
գործնական է եւ թէ՛ բարեսիրական:

ՕԻՄԵՈՆ

ՀՕՐ ՄԸ ՏՐՏՈՒՆՋԸ

Տղուս կենցաղը շատ կը տարբերի իմ տը-
ղայութեանս կենցաղէն, ինչպէս որ անոր
ապրած դարն ալ բաւական երկար տարի-
ներու անջրպետով մը բաժնուած եւ կեր-
պարանափոխ եղած է անցեալէն: Շատ ան-
գամ կը խորհիմ թէ ո՛ւր պիտի հասնի այս
կերպարանափոխութեան վախճանը: Իրաւ
է որ աշխարհիս մէջ բան մը չոչնչանար,
այլ կը փոխուի, սակայն այսչափ փոփոխու-
թիւնները շատ անգամ երկիւղ կազդեն ինձ,
որ մի գուցէ անդադար փոխուելով ու փոխ-
ուելով ոչնչութեան մատնուին մեր սերունդ-
ները: Իմ եւ տղուս մէջ հազիւ քսանընթիւ
տարւոյ տարբերութիւն մը կայ, եւ ահա
մեր ներքին վիճակին մօտէն ծանօթութիւն
ունեցող մէկը սոսկմամբ պիտի սեսնէ թէ՛
այս քառորդ դարու ժամանակամիջոցն ի՛նչ
փոփոխութեանց ենթարկած է մեր ընտա-
նեկան բարքերը:

Ես երբ տղայ էի՝ առտուանց արթննա-
լուս պէս ինքնիրենս կը հագուէի, երեսս կը
լուայի ու եկեղեցի կը վազէի «փոխ» ըսե-
լու: Իսկ տղաս արթննալուն պէս՝ սպասու-
հին կը փնտռէ որ զինքը հագուեցնէ, կա-
թով սուրճը բերէ ու կօշիկները սրբէ, ա-
ռանց բնաւ մտքէն անցնելու թէ՛ եկեղեցի
երթալ կայ: Ես պարապ ժամանակներս ժամ
կը շտկէի, պատարագ կընէի. տղաս կիրա-
կի օրերը թատրոն կը շինէ, ներկայացում
կուտայ. ես գոց գիտէի եկեղեցական եր-
գեցողութեանց մեծագոյն մասը, տղաս շիտ-
կէ շիտակ «հայր մեր» մը չգիտեր. ես
«չարական» կ'երգէի, տղաս «օբէրա» կը
մուտայ. ես ծեր մը տեսած ատենս ձեռքը
կը համբուրէի, տղաս ծեր մը տեսնելուն
պէս ծաղրել կուսի. ես ձեռք մը լաթը եր-
կու տարի կը հագուէի, տղաս տարին չորս
ձեռք լաթ կուզէ. ես հօրս հինները կը հագ-
նէի, տղաս կուզէ որ իր հինները ես հագ-
նիմ. ես սուրճ խմելը ամօթ կը համարէի,
տղաս գարեջուր կը խմէ. ես գրաբառի
կախատէի, տղաս գաղիբերէնի կը պարապի.
Ես մէկը փաղաքելու համար «սիրելիս» կը-
սէի, տղաս «մոն շէռ» կ'ըսէ. ես «պարոն»
էի, տղաս «միւսիւ» է. ես շուկան ճաշելը

շուայութիւն կը համարէի, տղաս կիրակի օրերն իսկ դուրսը կը ճաշէ. վերջապէս ինչ որ էի ես, տղաս բոլորովին իմ հակապատկերս կը կազմէ, եւ ես այժմ շուարած մնացած եմ թէ՛ մեզմէ որո՛ւն ուղղութիւնը շիտակ է:

Մեր երկուքէն մէկը հայ չէ, կամ ես կամ տղաս: Որովհետեւ եթէ երկուքնիս ալ մի եւ նոյն ազգութեան պատկանէինք, պէտք է որ հիմնապէս պահէինք մեր ընտանեկան բնատիպը եւ ճաշակի ու տարիքի վրայ միայն կայանար մեր անհամաձայնութիւնը: Ո՛հ, Աստուած իմ, ո՛ւր կերթանք արդեօք, դէպ ի ոչնչութիւն — չեմ գիտեր, բայց սա բացորոշ է որ հետզհետէ կը կորսնցնենք մեր ընտանեկան բնատիպը եւ կըլլանք խառնուրդ մը այլազան սովորութեանց: Երբ եւրոպական լաթեր հագած, աչքը ակնոց, ձեռքը զաւազան, իրարու հանդիպին երկու չիք երկտասարդներ եւ զխարկով ողջունեն զիրար (պոնժուռ) «ատիէօ» ներով, ո՛վ կըրնայ հաւատալ որ ատոնք մեր զաւակներն են: Շատ անգամ տղաս ինձ կըսէ որ առաջին տեսութեամբ, առանց հետն իսկ խօսակցելու կրնայ զանազանել Անգղիացին, Գաղիացին, Գերմանացին ու այլ եւրոպական ազգերն իրարմէ, որոշելով զիրենք իրենց տոհմին յատուկ ձեւերէն, լաթերէն, կազմուածքէն, շարժումներէն ու նիստ ու կացէն. եւ այս ո՛չ սակաւ ծիծաղ կը պատճառէ ինձ, երբ կը խորհիմ թէ «արդեօք ի՛նքը (տղաս) ինչէն պիտի ճանչցուի որ իմ զաւակս է»:

Սակայն այնչափ չծանրանամ տղուս վերայ, որովհետեւ այս փոփոխութիւնը ոչ թէ միայն իր վրայ կատարուած է, այլ մեր տան պարագաներուն գրեթէ մեծագոյն մասին վրայ ալ: Ո՛ւր է մօրս տունը եւ ո՛ւր կնոջս տունը. մայրս երեսը խաչակնքելով օրրան կը դնէր զաւակները, կինս խաչակնքելուն վրայ գաղափար իսկ չունի. մայրս հինգ Տաղաւարին կը խոստովանէր, կինս «Տաղաւարը» ամարանոցին մէջ կանգնել կուզէ. մայրս հօրս հետ պատկառանք կը խօսէր, կինս իմ վրայ իշխանաբար կը հրամայէ, մայրս զաւակներուն վրայ հոգի կուտար, կինս զաւակները խոշոնդոտ մը կը նկատէ իր հանգստութեան. մայրս երկանցը (տղա-

բերք) ժամանակ Աստուածածի՛ն կը գոչէր, կինս մանկաբա՛րձ մը մանկաբա՛րձ մը կը պոռայ. մայրս երբէք չէր հիւանդանար, կինս ժամանակին մեծագոյն մասը անկողնոյ մէջ կանցընէ. մայրս տնական աշխատութիւնները անձամբ կը կատարէր, կինս երկու սպասուհիով գոհ չըլլար. մօրս տունը կանոնաւորութեամբ կը փայլէր, կնոջս տունը գլուխն առեր կերթայ, մայրս մեր տան պահապան հրեշտակն էր, կինս իմ գլխուս փորձանքն է:

Ո՛հ, քանի՛ քաղցր ու երջանիկ էին այն օրերը ուր ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ պահք կը բռնէինք, Մեծ պահոց մէջ ծով կը կենայինք, առտու երեկոյ կ'աղօթէինք, մօրս աշխատութեանցը կ'օգնէինք, երեկոյին հայրիկը կը դիմաւորէինք, սեղանին շուրջը բոլորած «հայր մեր» կ'երգէինք. Երկա՛ր տարիներ անցած են այն օրերէն ի վեր, այժմ փոխուած է ամէն բան, ձգած ենք Արեւելեան ընտանեաց յատկանիշները, մերժած ենք մեր վրայէն, մեր տունէն, մեր անձէն, մեր լեզուէն ամէն ինչ որ Արեւելեան է, եւ այս ամէնուն փոխարէն ընդգրկած ենք եւրոպական քաղաքակրթութեան ամէնէն խայտառակները եւ ամենէն մլասասկարները:

Եւրոպական քաղաքակրթութիւնը իմ վրաս ալ մեծ ազդեցութիւն ըրած է, այնպէս որ անոր շնորհիւ օր մը ելմտացոյցս ծայրը ծայրին բերած չունիմ: Հայրս միշտ պահեստի դրամ կուներնար, ես միշտ պահեստի պարտք ունիմ. հայրս բնաւ չէր գիտեր մտահոգութեան ի՛նչ ըլլալը, ես օր մը գէթ ազատած չունիմ այդ մաշտղական ախտէն. հայրս բընաւ կռիւ չէր ըներ մօրս հետ, ես ամէն օր կուռոյ ազպարեզէն պարտեալ կը փախչիմ, որովհետեւ ո՛վ կարող է յաղթել քաղաքակրթութեան, կինս կըսէ որ խաւարը պէտք է տեղի տայ լոյսին:

Հին գլուխները պէտք է որ խոնարհին նորերուն առջեւ, եւ ես՝ իբրեւ խաւար, եւ իբրեւ հին գլուխ, տեղի կուտամ լոյսին ու կը խոնարհիմ նորերուն առջեւ:

Անցեալ օր աղջիկս շրջանաւարտի վկայականն առած տուն եկաւ դպրոցէն եւ ձեռքն ինձ երկնցուց որ համբուրեմ: «Ին-

չո՞ւ, աղջիկս, ըսի, պէտք չէ՞ որ դուն իմ ձեռքս համբուրես ։

« Ո՛չ, հայրիկ, պատասխանեց, եւրոպական քաղաքակրթութիւնը կը պահանջէ որ էրիկ մարդիկ կիներու ձեռքն համբուրեն. ֆրանսական գրականութեամբ չես զբաղեր որ գիտնաս թէ եւրոպայի ամենամեծ անձնաւորութիւններն անգամ երկու ձեռքը կը համբուրեն ։ Եւ ես ծիծաղելի չղառնալու համար՝ ամենայն երկիւղածութեամբ համբուրեցի աղջկանս ձեռուրները, շնորհակալ ըլլալով միանգամայն, որ եւրոպական քաղաքակրթութիւնը այնչափ խստապահանջ չէ. ի՞նչ պիտի ընէի եթէ փոխանակ ձեռուրներուն, ելլար ոտքերը համբուրելս պահանջէր ։

Այժմ մեր սուրը եւրոպական քաղաքակրթութեան տիպար մը կրնայ հանդիսանալ ամէն պարագաներով. մինակ ես եմ որ ֆրանք-արեւելեան դիրքովս « բարիա » մը դարձած եմ մեր ընտանեաց մէջ. ի՞նչ ընեմ, հինը կորսնցուցի, նորին ալ հետեւելու ժամանակ չունիմ, չուարած մնացած եմ, դուք խելք մը սովորեցուցէ՛ք. ի՞նչ ընեմ ըսէ՛ք, գլուխս ո՞ր քարին զարնեմ, պարտքերու մէջ կը լողամ, եւ դեռ կենցաղագիտութեան պահանջմանց ետեւէն չեմ կրցեր հասեր, որ տեսնամ թէ կենցաղագէտ մարդիկ ինչպէս դրամ կը հասցնեն ընտանեկան անհամար պահանջումներուն. այո՛, մտադրեցի այսպիսի կեդրոն մը հաստատուիլ. ես ալ մարդ եմ, աշխատասէր եմ, գործունեայ եմ, շատերէ աւելի ստակ կրնամ չահիլ, տեսնամ, գուցէ հոն կրնամ գոհացում տալ կնոջս, տղուս ու աղջկանս այլազան պահանջումներուն ։

Ք Ա Ս Ի Մ

ԱՂԶԿԱՆ ՍԸ

ՅՈՒՇԱՏԵՑՐԷՆ

Ամէնէն առաջ ներում կը խնդրեմ սիրելի ընթերցողներէս, բաւական ատենէ ի վեր ընդհատելուս համար այն քրոնիկները, զորս պատիւ կ'ընեն կարդալու « Հանրագիտակ » ի բազմաթիւ ընթերցողները. Այս ակամայ զանցառութիւնը ոչ թէ ծուլութեան կամ

թէ չկամութեան հետեւանք է, այլ կեանքի անհրաժեշտ պարտականութեան մը, զոր ամէնուն պէս ես ալ կատարելու ստիպուած էի. Ակնարկել կուզեմ նշանախօսութեանս զոր այնքան համակիր տողերով ծանուցանելու պատիւը ըրած էր « Հանրագիտակ » ի խմբագրութիւնը ։

Առիթէն կօգտուինք, խորին շնորհակալութիւնս յայտնելու համար թէ այս թերթին խմբագրութեան եւ թէ բոլոր այն ազնիւ բարեկամներուն, որոնք շնորհ ըրած էին անձամբ կամ գրով իրենց խնդակցութիւնները յայտնել ինձ եւ նշանածիս. Այս անձնական պարագան լուազոյն առիթ մը կընծայէ ինձ՝ ընթերցողներէն ներողութիւն խնդրելու, մի եւ նոյն ատեն՝ յայտնելու որ ըստ առաջնոյն պարբերաբար պիտի շարունակեմ գրի առնել իմ տպաւորութիւններս օրուան գրական, եկեղեցական եւ վարչական խնդիրներու վրայ ։

Նախորդ քրոնիկովս խոստացած էի էստեան վարժարանի այցելութեանս տպաւորութիւնները պատմել Ձեզ. Այդ խոստումը չեմ մոռցած, թերեւս յառաջիկայ քրոնիկով ներկայացնեմ Ձեզ. Այժմ կը փափաքեմ քանի մը դիտողութիւններ ընել այն այցելութեան առթիւ, զոր նախորդ շաբթու նշանածիս հետ տուի Ազգ. Հիւանդանոցին. Ըսուած է թէ ամէն գրող անպատճառ բան մը պիտի գրէ Հիւանդանոցին համար. Ասիկա ճակատագրական կերեւայ, որովհետեւ ահաւասիկ ես ալ այսօր իմ կարծիքս եւ դիտողութիւններս պիտի յայտնեմ Հիւանդանոցի կանանց բաժնին վրայ ։

Տնօրէնին բարեյօժար արտօնութեամբ ուղղակի գացինք կանանց հիւանդարանը, ուր քաղաքավարական ընդունելութիւն մը եղաւ մեզ՝ պաշտօնեաներուն կողմէ. Բնականաբար իբրեւ կին իմ ուշադրութիւնս պիտի գրաւէր մաքրութիւնը, որուն համար բնաւ ըսելիք չկայ. Անկողնի բոլոր կազմածները եւ յարակից ձերմակեղէնները ձիւներու պէս ձերմակ էին, դեղերու մատակարարութիւնն ալ շատ կանոնաւոր տեսայ, հիւանդապահուհիներէն մին կը բաժնէր դեղերը մասնաւոր հոգածութեամբ եւ անմիջապէս յետոյ հակալիւն ի գործ դնող

ուրիշ պաշտօնեայ մը մանրամասնօրէն կը քննէր քապիւլաներու վրայ գրուած դեղերու անունները, եւ կը բաղդատէր հիւանդապահուհիներու կողմէ յանձնուած դեղերուն հետ, որպէս զի անկանոնութիւն մը չպատահի: Այս հոգածութիւնը շատ սրտաշարժ էր եւ ցոյց կուտար որ բժշկական ներքին կարգապահութիւնը ըստ բուսականին անթերի էր:

Այս անկեղծ գնահատումը ընելէ ետքը, անշուշտ կը ներուի մեզ քանի մը դիտողութիւններ ընել, որոնց վրայ Հիւանդանոցի յարգելի տնօրէնին ուշադրութիւնը կը հրաւիրենք: Դիտեցինք որ հիւանդ կիները տեղիւն վիճակ մը ունէին: Չենք գիտեր թէ անիկա իրենց հիւանդութեան արգասիքն է արդեօք, բայց ամէն պարագայի մէջ, որովհետեւ այս վիճակը ընդհանուր էր, կենթադրենք որ քիչ մը աւելի բան մը ընել պէտք է ոգեւորելու համար այս տարաբաղէականները, որոնք հիւանդանոցին մէջ իրենց բուժումը գտնելու եկած են: Մթնոլորտին մէջ կարծես մեռելութիւն մը կը տիրէր, ինչ որ անշուշտ, յոռի տպաւորութիւն մը կը գործէ հիւանդներու հոգեկան վիճակին վերայ: Ասոնցմէ չատեր, որոնք ապաքինութեան ճամբուն մէջ մտած էին, ահաւի կերպով կը տաղտկանային եւ գիտենք որ տաղտուկն ալ տեսակ մը հիւանդութեան կ'առաջնորդէ: Զի՞ կրնար ըլլալ արդեօք որ մտաւոր հաճելի զբօսանքներ հայթայթուին, օրինակի համար ընթերցանութեան գիրքեր, լրագիրներ կամ զբօսալի հանդէսներ, ինչպէս օրինակի համար «Հանրագիտակ» տրուին այս խեղճ կիներուն:

Գիտէք արդէն որ զուարթութիւնը տեսակ մը դեղ է եւ ազդու դեղ մը, որ տաղտուկը կը փարատէ անմիջապէս եւ զուարթ տրամադրութեան մը տակ կը պահէ հիւանդը. ասիկա ալ բարիք մըն է, զոր կարելի է դիւրամատչելի միջոցներով հայթայթել: Հիւանդանոցի յարգելի տնօրէնը որ ճանչցուած է նաեւ իբրեւ գրասէր անձնաւորութիւն մը, անշուշտ մեզմէ աղէկ գիտէ ընթերցանութեան օգուտները, եւ կը յուսանք որ թելադիր կըլլայ Հոգաբարձու էֆէնտիններուն, ոչ միայն կանանց՝ այլ նաեւ արանց

բաժնին մէջ հաստատելով ընթերցասրահներ, ուր գտնուին զբօսեցուցիչ գրուածքներ: Մեր այցելութեան պահուն դիտեցինք նաեւ անպատեհութիւն մը, որուն համար ըսուեցաւ մեզ թէ առժամանակեայ է: Ընդարձակ սրահի մը մէկ անկիւնը մահճակալի մը վրայ ընկողմանած էր տարաբաղդ Աղան վարդապետ, չարականի հսկայ հատոր մը թղթատելու զբաղած: Ինչ մը անդին կիներ ու աղջիկներ վերմակներուն սաւանները կանցնէին այն տեսակ շարժումներով, որոնք կըրնային էրիկ մարդու մը հանգստութիւնը վրդովել: Իրաւ է թէ խեղճ վարդապետը երբէք չէր հեռացներ աչքը գրքին վրայէն, բայց վերջապէս պահեր կան՝ ուր մարդ մը, որքան ալ ժուժկալ եւ նոյն իսկ հիւանդ ըլլայ, կրնայ փորձութեան ենթարկուիլ: Մենք Աղան վարդապետի հանգստութեանը փափաքող ըլլալով, այս պարագան դիտել տուինք մեզ առաջնորդող պաշտօնէին, որ յայտնեց թէ կիներու դրացնութիւնը առժամանակեայ էր:

Հիւանդանոցը այնպիսի ընդարձակ հաստատութիւն մըն է՝ որուն ամէն մասերը կտրելի չէ աչքէ անցնել քանի մը ժամուան այցելութեան միջոցին, Յակոբեաններու, Ունճեաններու եւ Կիւլպէնկեաններու բաժինները առաջ կը տարուին ամենայն փութանութեամբ, ասոնց մասին դիտողութիւն մը ընելէ առաջ պարտաւոր էինք Հիւանդանոցի միւս բաժիններն ալ այցելելու, բայց ժամանակի անբաւականութեան պատճառաւ որոշեցինք ուրիշ առթի մը թողուլ, եւ այն ատեն կը խոստանանք մեր գնահատութիւններն ու դիտողութիւնները ներկայացնելու այս բարեսիրական բազմապահունջ հաստատութեան մասին:

ԷԼԻՉ ՀԱՃԵԱՆ

Յ.Գ. — Այն քանի մը շարաթներու միջոցին որ չկրցանք մեր քրոնիկները գրել, բաւական կարեւոր խնդիրներ ունեցանք կրթական եւ կեղեցական տեսակէտով, անոնցմէ ամէնէն աւելի այժմէութիւն ունեցող խնդիրն է եռաձայնը, որու մասին արդէն սկսած են կարծիքներու տարբերութիւնը, յորմէ հետէ Պարտիզակցի Տ. Վահան վարդապետ իր

սրտաբուլիս յօգուածը գրեց եռաձայնի դէմ:
Այս մասին մեր կարծիքը պիտի յայտնենք
ներկայ գտնուելէ ետք Աւագ Հինգչարթիի
եռաձայն երգեցողութեանց Ղալաթիոյ եկե-
ղեցիին մէջ: Նոյն

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Երեւելի մարդոց սարօրինակութիւնները

Պայլ ջղաձգութիւն կ'ունենար երբ ծո-
րակէ մը հոսող ջուրին աղմուկը լսէր:

Կիւրօ Ռոնի չքեղապէս զգեստաւորուած
կը նկարէր:

Պիւժոն ասեղնագործուած ժանեակէ թեւ-
նոցներով կ'աշխատէր:

Մեզրե ցերեկ ատեն ճրագի լուսով
միայն կ'աշխատէր:

Մալպրանշ իր քթին ծայրը ոչխարի զիստ
մը կը տեսնէր միշտ:

Ռիշըլիօ կարգինալը միշտ կարասներով
չըլապատուած էր:

Բաւալ ամէն քայլափոխին անդունդ
մը տեսնել կը կարծէր իր քովը:

Պոռնալու բեմասացութենէ առաջ ջու-
թակի վրայ եղանակ կ'ածէր:

Պոսիւե երբ ներշնչուիլ ուզէր, պաղ
սենեակի մը մէջ կը կենար, գլուխը ջերմա-
պէս փաթթելով:

Երաժիշտ Սարթին մութին մէջ երաժըշ-
տական կտորներ կը յօրինէր:

Սիւնառօզա երեւակայութիւնը գրգռելու
համար, լոյսն ու աղմուկը կը փնտռէր:

Բախսիկոյ անկողնոյ օթոցներու մէջ
թաղուելով կը ներշնչուէր:

Քարաչիօյի պզտիկ մուկէն կը վախնար:

Քրեպիյեօն սեղանին վրայ ազուաներ
պահելով կը գրէր իր ողբերգութիւնները:

Մասալ Տրփփան ցերեկը կը քնանար եւ
գիշերը արթուն կը հսկէր:

Մեհիւլ իր դաշնակին վրայ մեռելի մը
գլուխ կը զետեղէր:

Թիւրիօ աղւոր մը ճաշէլէ յետոյ միայն
կ'աշխատէր:

Շիրէն ոտանաւոր գրեթէ առաջ, ոտքե-
րը սառնոյցին մէջ կը դնէր:

Ժիոսե գիշեր ատեն աշխատիլ կը սիրէր,
երբ ներշնչումը գար, ոտքի կ'ելնէր, տունին

ջահերը վառել կուտար, իր գլխուն վրայ
մոմերով ծածկուած մեծ գլխարկ մը կը դը-
նէր, եւ այսպէս նկարելու կը սկսէր:

Ամբէր խօսելու ատեն աչքերը ունկնդ-
րին կոճակներէն միոյն վրայ կը սեւեռէր:

Մասալ Տր Սրայէլ Գոփէի մէջ ուռնի-
նէրու սօսափունով միայն կրնար քնանալ:

Վալթիո Սօթ իր դասերը պատմած ա-
տեն, զգեստին կոճակներէն մէկը մատներով
կը դարձնէր:

Քաղիմիո Տըլալիյն իր ողբերգութիւն-
ները սենեակին մէջ պտըտելով կը շարադ-
րէր:

ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

ՉԵՌՔՍ ՈՐՈՐՏԱՄ

Ձեռքս պիտի տամ սա միւսիւ Հայկին
Բայց չի սիրէր կոր ան ալ շատ հայ կիւն:

Եթէ ամուսինն ըլլաւ Տիրանին,

Այն պիտի տեսնէր ուրիշ իրանին:

Եթէ կիւնն ըլլաւ սա մեր Արամին՝

Գիտեմ փափաքներս պիտի բառամին:

Թե ամուսնանաւ հետը Հրանտին,

Կ'ունենանք կրօն, շուտոյ շատ անդին:

Եթէ կիւնն ըլլաւ աղա Գառնիկին,

Ձեռքն անոր բաց ե, ինչպէս Բառնիկին:

Եթէ սիրելու ըլլաւ Սեւիան,

Ա՛ն ալ, չէ՛ չըլլար, ե շատ սքսքան:

Գեշ չէր փերփոյր, միմոս Գրիգոր,

Ան ալ ուրիշին համար կ'երկիր՝...

Գեշ չէ պիտի ըսեմ քիչ մը սա Խաչիկ,

Բայց ան ալ կ'ուզէ պաշիկ, ետք՝ պանիկ:

Ձի պիտի մերժեմ բովալու Յովհաննէս,

Բայց սալօնի մեջ մա՛րդ քե կով հանես:

Շատ շուտով երկ կ'առնեմ սա Մովսէս,

Բայց ան ալ կ'ըսէ միշտ «Կընի՛կ քո՛վս ես»:

Գեշ պատահ ալ չէր շիրին Վահրամիկ,

Բայց անիկա ալ եւ աւա՛ղ, ուսմիկ:

Պիտի մոռնայի քիչ մնաց, Ներսէս,

Թե կ'ուզես խօսք տամ, դուրսու ու ներսու:

Բայց պիտի ե ընտրեմ ինձ մեկ ամուսին,

Որ չեղլաւ դպչիմ հորս նամուսին:

Խօսքը մեր մեջը վաղը Ս. Չափիկ՝

Տարիքս կ'ըլլայ ճիշտ յիսուն հասիկ:

ՍԿԵԼՈՒՄ

ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԻԿ

ՄԵԱՑԱԾ ՏՈՒՆԻԿ

(Ընդօրինակեց)

Գ.

Ազնիւ Խմբագրապետ

« Հանրագիտակ » ի

Անցեալ օր, երբ ծովափին մօտ պտոյտ մը կատարելու վրայ էի, եւ կը խորհէի մեր գրական դաշտին ամայութեանը վրայ, պատահաբար աչքիս զարկաւ դեղին ու մաշած թուղթերու անհրապոյր պրակ մը, զոր անգոսնելով պիտի անցնէի (ի՞նչ մեծ կորուստ մեր գրականութեան համար), եթէ հզօր նախազգացում մը զիս չդրդէր զիջողութեան: Մօտեցայ ուրեմն եւ ի՞նչ կ'ուզէք որ գտնեմ, ահա՛ւասիկ թէ ի՞նչ: Միասին կրնանք կարդալ, ու մանաւանդ պիտի ուզէի որ Հանրագիտակի ընթերցողներն ալ մասնակից ընել հաճէիք « Հանճարեղ Քառեակներ » ու այս խնջոյքին, որ մեր գերագոյն հպարտանքը կրնայ ըլլալ, եթէ ոչ գրական փառքը: Բայց սպասեցէ՛ք, վայրկեան մը, չկարծուի թէ այս գիւտը դիւրին յաղթանակ մը եղած է ինծի համար. ո՛չ, ո՛չ. այդ խորհրդաւոր ու զգայալեղ գոհարները déchiffrer ընելու համար ի՞նչ զոհողութիւններ կրած եմ ... ա՛հ ... բայց չէ՛, հոգ չէ՛, որովհետեւ իմ չքնաղ վարձատրութիւնս ահա՛ւասիկ:

Յարգանքով՝

ՀՐԱՉԵԱՅ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀԱՆՃԱՐԵՂ ՔԱՌԵԱԿՆԵՐ

Նուերր

(Մ. Ա. Պարսաւեան)

Անոր՝ զոր պիտի սիրեմ

Լեւակները, սմբուլները, ամէ՛նն ալ
Մըտածեցի օր մը քեզի՛ նըւիրել,
Բայց ուզեցի երբոր քեզի մօտենալ.
Փունջերն ամէն դարձան ձեռքիս մէջ ... աւել:

* *

Կովը

(Մելիքն Ասատուր)

Ո՛վ ընտանի կենդանի,
Աքաղաղէ՛ն ալ բարի,
Որ առտուններն դաշտ կ'երթաս
Մեզի միս եւ կաթ կու տաս:

* *

Գիւղանկար

(Միսակ Մեծարեան)

Ցայգն է պայծառ, գորտերն անդուլ կը կռկռան
Անօթի են, մերթ լռութիւնը կը խածնեն,
Հարսնուկները դէպի ժայռին ծոցը թըռան՝
Գիւղանկարն յուզուած է այս տրամութենէն:

* *

Հարս ու կեսուր

(Քերթուած)

Հարսին ըսաւ օր մը կեսուր
« Ինչո՞ւ խայթես զիս այդպէս սուր ... »
— « Զի, Փարիզէն հիւանի Մանսուր
Գիտեն թէ դուն սեպուիս ... կէս մուր ... »:
(Ֆրանս. նման.) Աղեֆ. Գ. Փանոսեան

* *

Խունկը

(Եղ. Դօրանեան)

Դաշնամուրին երգին հետ կարծես ծծեմ
խունկըն յար
Եթէ ածողն է անոր ձեռք մ'հաղուագիւտ
ու ճարտար,
Խունկը անդին կը ծըխի ամանին մէջ ան-
դաղար,
Ո՛հ, գո՛րշ միւզիք, բանէ մ'ալ երբեք չու-
նիմ գաղափար

* *

Ամասիա

(Կրօն. քանասեղծութիւն)

Ամասիա հրեյի երբ կը գոչեն անդադար,
Ու միսկէթի խնձորն ալ զոր ճաշակենք գաղտ-
նաբար,
Կը խորհիմ ես, թէ սալորն ու դդումն ալ,
ո՛վ Աստուած,
Ինչպէս նաեւ Ամասիան՝ մարդկութեան դո՛ւն
ես տըւած:

Հայկազն Խանդավազ

(Որ յԱմասիա)

* *

Ժամացոյցը

(Գաբրիէլ Խանգեան՝ որ կոչի Վարդգէս)

Ժամացոյցը կ'ընէ թիք թաք,
Ո՛հ, ժամանակն է որ կ'անցնի,
Ու կը քայլե՛նք, ի՞նչ ալ շիտակ
Ժամացոյցը կ'ընէ թիք թա՛ք:

* *

0', 0', 0'

(Միհրան Ուղուրեան)

Այս ինչ անգունդ էր ինկայ, օ', իմ բախ-
տէս ուղուրուզ,
0', անկումը որքա՛ն դառն ու տխրագին է
ո՛վ Տէր,
0', օգնութի՛ւն, օ', չըկա՞ր մէկը որ զիս
ազատէր
Քերթողութեան այս skrsին բաւիղներէն
խորա՞յզ:

* *

Երբա՛նք

Իմ սիրականքս խնկաւէտ
Կը վախնամ քեզ ընեն նազար
Եկո՛ւր, քեզ հետ երթանք հազար
Փարսախ հեռու՝ մինա՛կ յաւէտ ...:

Հրանճ Տ. Նազարեան

* *

Երկու՛նքք

(Արս. Յարութիւնեան)

Այս երկունքն, աւա՛ղ, որքա՛ն երկընցաւ,
Մութին մէջ ձայներ կ'առնեն ելեւէջ,
Գորտի ձայներ՝ որ կ'ազդեն ինծի լաւ,
Միակ բոյսն առողջ՝ ես եմ ճահճին մէջ:

* *

Ներաշխարհ

(Տիրան Զրափեան)

Հոգւոյս մէջը կը հոլածիմ
Վըսեմութիւնն ովկիանին,
Մուսաներու անմեռ թռն եմ
Քըսան տարի պիտի տքնին:

* *

Գեթսեմանի

(Գր. Գ. Յ. Գալուստեան)

Գեթսեմանի՛, Գեթսեմանի՛,
Աս ուրիշ բան չի նըմանի՛,
Կըրօնքի բո՛յր ունի անի,
Գեթսեմանի՛, գեթսեմանի՛:

ՑԻՐՈՒՑԱՆ ԽՕՍՔԵՐ

ՈՐՈՆՔ՝ ՊԱՐԱՊ ԽՕՍՔԵՐ ԱՆ ԿԸՍՈՒԻՆ

Ինչպէս որ սովորութիւն է Զատիկի առ-
թիւ հաւկիթները կը ներկուին ու կը կար-
մըրին, սակայն երբեք չեն կարմիր այն
հաւկիթները՝ որոնք շաբաթ մը ամբողջ կը
սլքտկան եկեղեցիներուն բակերը:

X

Ժողովուրդին եկեղեցիէն ուժացման
պատճառը ոմանք կը վերագրեն երգեցողու-
թեան տեսակին, այլք պնակներու շրջագա-
յութեան վակօնածեւին, ուրիշներ քահանա-
ներու ընթացքին, բայց ես ասեմ Ձեզ՝ որ-
չափ որ առնք մասամբ պատճառներ են,
սակայն պատճառաբանութիւններ ալ են,
բուն պատճառը ամէն օր Զատիկ չըլլալն է:

X

Այն բանին մէջ երբ չիկայ ամօթ, երբեք
չես գտներ նաեւ հոն համ հոտ:

X

Քանի որ ամուսնութեան առաջին պայ-
մանը սէրն է, ինչո՞ւ ուրեմն յաճախ կը մե-
ղադրեն այն ամուսնները՝ ըսելով «վայ կըլ-
խուն չամչցածները առաջուրնէ իրար սիրե-
ցին տէ, անկից ետքը իրար առին»:

X

Կնոջ մը սիրտը շահիլը ըստ իս գանձ մը
շահիլ ըսել է, քանի որ անոր համար շատ
անգամ գանձեր կը դատարկնան:

X

Ինչպէս որ կին ժրագլուխ պսակ է առն
իւրում, այնպէս ալ կին դդումգլուխ փոր-
ձանք է առն իւրում:

X

Սիրաբանութեան մէջ աչքը լեզուէն պեր-
ճախօս է:

X

Կինը խաբելը շատ դիւրին է, բայց կը-
նիկէն խաբուիլն անտանելի:

X

Ապրուստի պայքարին մէջ փափաք մը
երբ իրականութիւն գտնէ, քիչ ատենէն իր
հաճոյքը կը կորսնցնէ, որուն կը յաջորդէ
ուրիշ փափաք մը, ու այսպէս շարունակա-
բար, արդ քանի որ այս այսպէս է, գիտ-
նանք ուրեմն սանձ մը դնել մեր փափաք-
ներուն ու հաճոյքներուն:

X

Խրատը՝ տուողին զղջման քարոզն է:

ԵՐՄՈՐ

ԹԷ ԻՆՉՊԷՄ ՆՇԱՆՈՒԵՑԱՅ

Մարդ կը ծնի անշուշտ բան մը ըլլալու, կամ աւելի ճիշդը բան մը ընելու համար: Եւ ո՞վ է այն մարդը որ իր ամբողջ կեանքին մէջ գոնէ փոքրիկ փափաք մը չ'է ունեցած իրագործելու:

Սակայն փափաքներ կան որոնք իրարմէ կը տարբերին, ոմանք կ'ուզեն ինքզինքնին պաշտօնեայ տեսնել դրամատան մը մէջ, ուրիշներ դերասան եւ շատեր ալ փեսայ, հարուստ դրամարկղի տէր աներոջ մը տունը:

Ահա փափաք մը որ, սիրելի ընթերցող ամէն մարդու հաշտոյն շատ լաւ կը յարմարի:

Բացառութիւնը յարգուի թերեւս, երբ ըսեն թէ մարդ չի յառաջանար հայ վաճառականի մը քով, բայց երբէք մի հաւատաք, երբ ձեզի պնդեն թէ այն ինչը հարուստ աներ մը ունենալու հակառակող մ'է:

Ինչ մեղքս պահեմ, խելքս հասնելէն ի վեր այս բանին շատ կը փափաքէի:

Լուսահոգի վարժապետս սովորեցուցած էր թէ՛ մարդ պէտք է իւր մտքինը բացատրէ յստակ կերպով, եւ կարելի եղածին չափ քիչ բառերով: Ես ալ վարժապետիս այս պատուէրը շատ լաւ ըմբռնելուս, առաջին տեսած աղջկանս ամուսնական թեկնածու կը ներկայանայի, առանց յառաջաբանի եւ երկար բարակ complimentներու թող որ ամէն անգամ ալ ծաղրի ենթակայ կըլլայի:

Ցերեկները դպրոցին մէջ երեւակայութեան կը ներկայանային զուարճալի տեսարաններ, հաճոյքի պատկերներ եւ մտքիս մէջ Սպանիական դղեակներ կը կազմէի: Իրիկուան ժամանակ չի կորսնցնելու համար գրքերս (եթէ երբէք կային) գրպաններս կը թխմէի եւ շիտակ մօտակայ դաշտը կերթայի:

Ջարմանալին ո՞ւր է գիտէք, հայրս ալ կը պարծենար որ տղաս մարդ կ'ըլլայ կոր:

Դպրոցիս ամսականին հետ հայրս կօշկակարին դրամն ալ կը հոգար, քանի որ երեսուներորդ օրը արդէն կօշիկներս հագնուելու վիճակին մէջ չ'էին գտնուէր:

Տարեկան արձակուրդը սկսած էր, մօրս պնդումներուն վրայ, հայրս զիս փաստա-

բանի մը քով դրաւ երկու ամսուան համար: Այս արհեստը գործիս կուգար, քանի որ շաբաթը երկու անգամ դարձեալ տունն էի, եւ իրինկուններն ալ դպրոցականի պէս կանուխ վերադառնալով կրնայի նաեւ իմ զբաղումներուս ետեւէն խնալ:

Կէս օրին էֆէնտին — ես դատարան կերթամ կոր — ըսելով վերի դուռնէն կը մեկնէր, ես ալ անմիջապէս վարի դուռնէն շիտակ կամուրջ: Երբեմն մայրս կը հարցնէր թէ ինչո՞ւ համար շատ կանուխ եկար:

Իսկոյն կը պատասխանէի.

— Այսօր դատ չ'ունէինք:

(Իբր թէ դատի ատեն իմ ներկայութիւնս անհրաժեշտ ըլլար):

Քիչ մը ժամանակ ասանկ երթալէն յետոյ գործս փոխեցի:

Ա՛լ adieu կանուխ վերադառնալներ, adieu ուրբաթ օրերը տունը մնալներ, ո՞ր մէկը ըսեմ:

Սակայն կարծեմ լոյս աչքով չ'ըրածներս կրնայի գիշերները ընել, ուստի ամէն օր մինչեւ կէս գիշեր կը դեգերէի լեռնէ լեռ, փողոցէ փողոց, բայց նշանած ... Ասանայ:

Վերջապէս տեսնելով որ չափտի կրնամ շնորհքով աղջկան մը հետ ամուսնանալ, քանի որ գիւղիս բոլոր սիրուն աղջիկները քէն ըրած էին ինծի դէմ, ուստի որոշեցի անձնասպան ըլլալ:

Հիմայ խնդիրը լաւ կերպ մը գտնալն էր: Երկար բարակ մտածումներէ յետոյ այն ալ գտայ, այսինքն վարդապետ ըլլալ:

Չ'է՞ մի որ վարդապետ ըլլալը տեսակ մը անձնասպանութիւն է (եթէ ըսածիս չ'էք հաւատար կրնաք վարդապետի մը հարցնել):

Դիտելով որ մեր շնորհունակները Սուրբի պէս անմեղ կեանք մը կը վարեն հեռու աշխարհիկ զուարճութիւններէ, ուստի հարկ համարեցի որոշումս գործադրելէ առաջ մէկ երկու օր եւս հաճոյք վայելելու համար Ալէմտաղի երթալ:

Շաբաթ իրինկուն մ'էր, այս օրուան պէս միտքս է, գիւղէս ճամբայ ելայ դէպ ի այդ

հրաշարի վայրը ուր գացողները կը պատմեն թէ մարդ ամէն տասը քայլին պարտաւոր է մարմնոյն շոգին դուրս հանել, անշուշտ օդին ու ջուրին ազդեցութեան տակ:

Կիրակի օրը սենեկիս մէջ նստած՝ թէ՛ փողոցը եւ թէ՛ մանաւանդ դիմացի տունը. որը դիտելով զբաղած էի, երբ աչքիս երեւցաւ դիմացի տանը պատշգամբ ուր՝ սիրուն աղջիկ մը նստած էր, ան ալ իր կարգին զիս դիտելու զբաղած:

Ժպտեցայ, փոխարինեց, ձեռքս ճակտիս տարի, մազերը շտկեց:

Ա՛հ, երջանկութիւնս չափ ու սահման չ'ունէր, վստահ եղէք որ երկաթուղիին առաջին պարգեւը զիս այնչափ չափտի ուրախացնէր որչափ այս պարագան:

Առիթը փախցնելը յիմարութիւն էր:

Բաւական յոգնելէ յետոյ, վերջապէս կրցի հասկնել թէ հետը տեսնուիլ կը փափաքիմ:

Պատասխանը ժխտական չ'էր:

Հիմայ գործը գիշեր ըլլաւ էր, կարծես թէ ցերեկը խարխիս նետած էր երկրին յատակը, այնչափ գիշերը կուշանար:

Սպասելը ո՞րչափ գէշ բան է եղեր Աստուած իմ:

Ժամացոյցս քանի կը նայիմ իրարմէ հինգ վայրկեան միայն տարբերութիւն ունին, մինչդեռ ես այնպէս կը կարծէի թէ ժամ մը անցած է:

Վստահ էի որ, եթէ ամբողջ գիշերը հետս խօսակցիլ հաւանէր, այն ատեն ալ ժամացոյցս կայօք պիտի յառաջանար:

Չ'է՞ մի որ հաճոյքի ժամերը զգալի չ'են ըլլար:

Չ'երկարեմ, ահագին սիրտհատնումէ ու տառապանքէ մը յետոյ վերջապէս ժամը երկուքին հասաւ, չմոռնամ նաեւ աւելցնել թէ՛ առանց բերանս պատառ մը բան դրած ըլլալու, ախորժակս այնչափ գոցուած էր:

Ա՛լ սկսայ տունին բոլորտիքը սլքտալ, մէյ մը վար մէյ մը վեր, մէջտեղը մարդ չ'կայ: Յուսահատութիւնը զիս պատեց, վայրկեան մը մտածեցի թէ չ'ելլայ զիս խաբած ըլլայ, բան մը՝ որ դժբախտաբար ինձի համար նորութիւն մը չ'էր սեպուեր:

Երբ այս մտածումներով միտքս զբաղած

էր, յանկարծ մութին մէջ շուք մը երեւցաւ, անիկա էր, ճանչցայ, եւ իսկոյն քայլերս դէպ ի անոր ուղղեցի, ոտքերս իրարու մէջ անցնելով:

Հիմայ խնդիրը խօսք բանալուն վրայ էր, ի՞նչ ըսեմ, չուարեցայ մնացի, ուստի անմիջապէս առանց ժամանակ կորսնցնելու կամաց մը ձեռքը թոթուեցի:

Ես այնպէս կը կարծէի որ ըրածիս պիտի բարկանար, բայց ընդհակառակը գոհ մնաց եւ ինքն ալ ուժգին մը ձեռքս սեղմեց:

— Անունիդ ի՞նչ է արդեօք օրիորդ, հարցուցի մեղմ ձայնով մը:

— Նուարդ է, ըսաւ:

Ուրախութիւնս քիչ մ'ալ աւելցաւ, որովհետեւ եթէ հրեշտակի չափ գեղեցիկ այս աղջկան անունը Հոռոք եղած ըլլար, անմիջապէս հեռու պիտի փախչէի քովէն:

Մի խնդաք բնաւորութիւն է:

Մէկ ժամու չափ խօսակցութենէ մը ետք որ բնականաբար առեւտրական խնդիրներու շուրջ չէր դառնար, բաժնուեցանք իրարմէ նորէն տեսնուելու խոստումով:

Առաւօտուն ստիպուած էի վար իջնալ, սուրճաքս տեսնողը զիս պիտի մեղքնար, այս բանը ես անձամբ հաստատեցի հայելին մէջը դէմքս դիտած ատենս, մինակ լալս պակաս էր, եթէ ասիկայ ալ էրիկ մարդուն պատիւին չի դաչէր, անշուշտ չափտի վարանէի:

Կէս ժամու չափ ինքնիրենս խորհրդակցեցայ, իջնալու թէ կենալու մասին, գո՞րծս պէտք էր թէ Նուարդը, եւ աւելին կայ, գոնէ անոր անակնկալ մը ընելու համար աղուոր նուէր մը տալ պէտք էր, ուստի մեկնեցայ գիւղէն, միշտ աչքիս առջեւ ու մութիս մէջը ունենալով Նուարդը:

Երկուշարթիէն մինչեւ Ուրբաթ տանելիք նուէրիս վրայ կը մտածէի, երբ թերթերու մէջ կարդացի թէ՛ Թեյքս ադամանդներու գինը զեղչուած է, քայլերս չիտակ հոն փութացնելով սիրուն մատանի մը գնեցի:

Տուած ատենս անշուշտ կեղծ ըլլալը չափտի կրնար հասկնալ, քանի որ ցերեկ ատեն հետը տեսնուիլս անկարելի էր:

Վերջապէս շաբաթ գիշերը հասաւ, գիւղ երթալուս տեսայ զինքը դրանք առջեւ, որ անշուշտ ինձի կ'սպասէր:

Այս գործին շիտակը շատ կը զարմանայի, այնչափ յոռետես էի իմ մասին:

Ինձմէ վար մարդոց բարեւ տալը վերջացուցի, շատեր կարծեցին որ վիճակահանութեան առաջին պարգեւը շահած եմ, տխմարները չէին գիտեր իմ ուրախութեանս բուն շարժառիթը:

Կամաց մը մօտեցայ Նուարդիս, ու թեթեւ մը ձեռքը սեղմեցի:

— Ա՛խ, ո՞ւր մնացիր, ըսաւ, չաբա՞մ մըն է որ մտաւտանջութեան մատնուեցայ:

Ա՛հ, այս բառերը ես նշանածիս բերնէն պիտի իմանայի՛, ի՛նչ բարեբախտութիւն Աստուած իմ, ուրախութենէս քիչ մնաց որ . . . (Allons donc):

Մատանին տուի, խնդաց ու այդ գիշերը անցաւ ճիշտ այնպէս ինչպէս որ ձենէ շատեր անցուցած են արդէն:

Կիրակի օրը գիւղին սովորութեան համեմատ Թաշ-սէյիւն ըսուած տեղը գացի եւ որչափ մեծ եղաւ զայրոյթս, երբ հոն տեսայ Նուարդը՝ ճերմակ գոգնոց մը կապած ու գիրկն ալ մէկ տարեկան պէպէք մը, մի եւ նոյն ժամանակ երբ իմացայ Տիկինին սախօքերը:

— Նուա՛րդ, աղջիկ, տղոցը ուշադրութիւն ըրէ:

Պահ մը արձանացած մնացի, նշանածս սպասուհի մըն է եղեր, արդէն ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ, առջի օրէն իմ հաւատալը անգամ չէր եկած, բայց եթէ ոչ ինք, գոնէ Նուարդ անունը զիս խաբած էր:

La musique et la danse vont toujours ensembles:

Բայց Նուարդ մը, սպասուհի չէի կարծեր երբէք:

ՆԵՐՇԱՊՈՒՋ

Տ Խ Ր Ո Ւ Ն Ի

Խմբագրութիւնս իր ցաւակցութիւնը կը յայտնէ Վսեմ. Տիգրան էֆ. Տէր-Ներսէսեանի եւ որդւոյն տպարանապետ Վահրամ էֆ. Տէր-Ներսէսեանի, իրենց թոռան եւ անդրանիկ վեցամսեայ զաւկին մահուանը առթիւ:

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Համեստափայլ զազէթածի

Պարոն աղբարիկս,

Քա գուզում եա՛վրուս, քեզի զահմէթ մը ունիմ տալիք, եանի ուղածիս պէս ընես նէ կայ եայ, ժամ մը շինած պիտի ըլլաս: Կայնէ նախը ընեմ:

Սա զազէթաներուն մէջը Թօաֆ Թօաֆ պանէր կը գրէ, Թօղլաեան կ'ըսեն, հէլլէթ տէ դուն ալ կը ճաշնաս, քա եա՛վրում, Գոն-կորդաի թէռաթուռը պալօն կը խաղան եղեր, բախլախօրանին օրը տալոջս կնկահարին տղին արխատաշին օրթախը, աղջիկանս հետը Թաթա՛վլա ըստրիտեայի բանախրին խրկեցի, ճահիլ օր տեսնելու համար գիշերըն ալ թէռաթուռը պալօն խաղալու կերդան, տալոջս կնկահարին տղին արխատաշին օրթախը սըխընդըի կուգայ, աղջիկս հոն ձգելուն պէս՝ մօտիկ ճամբան կը վազէ, Թօղլաեանն ալ աղջիկս մինակ կըտեր է, քովը եկէր՝ «մանտազէլ պաստա մը կը հրամմէք» ըսէր է, աղջիկս՝ «ես պաք կը պոնեմ կոր, պաստաին մէջը խուրեռլս եաղի կայ» ըսեր է, քա եա՛վրում, անանկ անուշիկ մը խընդացեր է քի, զա՛վալը ճահիլս սիրտը տալախին հետը բրցուցեր է, խնդալուն սէպէպը գիտեմ, դուսումնականին հետը գրաբարձա պիտի խօրաթես, խուրեռլս եաղիին գրաբարձան կտրած պոչի եաղ կ'ըսեն:

Հիմայ սիրտը ճիէր Թա՛վասիի պէս խա՛վուր խա՛վուր կըլլայ կոր:

Անցած օր ալ զազէթային մէջը ասոր գրածները կը կարդաին կոր, գրեր էր քի, ես պոչ կընիկ ունիմ պոչ ալ քանծիք, զա՛վալը մախսումս ասոնք լսելուն պէս, եկաւ ճիտս բաթտըվեցաւ, «ազապ է եղեր, անուշիկ մարիկս, կը մեռնիմ կոր, ինծի ճար մը ըսելով՝ էօնքիւր էօնքիւր լացաւ:

Քա եա՛վրում, հիմայ դուն մայր էղիր տէ ասանկ ճիէէր կտրտուկ պաներուն դիմացիր:

Էեօրքի այս չօրպան դուն համով հոտով էքէլու ըլլաս նէ, քէսէիս պէրանը քեզի համար պանալուս պէս՝ խաթրըդ էվէլ էվէլօք խօշ կընեմ:

Հիմայ իմին զէնկինութիւնս իլէն, աղջիկանքս տանտիկնութիւնը իլէն, աղւորութիւնը նկանակեմ քի, անոր կէօրէ երթաս տէ մէթ ընես:

Աստուծոյ տուվածէն հրէիճէ զէնկին էմ, խում խարու խալէին տակը թէնէքէ մահալլէսին խօս խօճաման երկու օտալը, մէյ մալ թափան իշիով տունէն տիրէկմը ունիմ, թափան իշիին քիրաէն տասը զըշ ամսական կառնեմ, տունին քիրէմիտին վրայ ելլաս կայնիս նէ կայ եա՛, ան բիւթիւն խատի քէղը, Ֆէնէր պաղճէսին, Ատաները բիւթիւն կը տեսնաս: Զորս հատ թէճիրէ ունիմ իրարմէ մենծ, խոշոր դազան մը, մէկ համամ լէհէնի, աղւոր պարխաճ մը, մէկ սարը, երկու լէնկէր, երէք հատ սահան, մէկ թափայ, երկու թէքնէ, մէկ թէքնէլիք, մէկ պուղատայ քիւֆէսի, իրեք չիֆտ լալըն, մէկ սխտոր կուշ, երկու կապի թէնէքէ, մէկ պալթա, մէկ սաթըր, երկու քէպճէ, հինգ չաթալ, երկու թըքալ, բեսաս կայ նէ՛ մէյ մըն ալ կառնեմ, մէկ մեծ քիւպ խաբախովը, հինգ խրպա ճուր կարնէ, քիչ մնաց կը մոռնայի կոր, երկու հատ աճոզ: Այս էչեաներուն ամէնքն ալ փեսացուիս պաղլամիչ պիտի ընեմ:

Հիմայ աղջիկս նկանակեմ, ծուներու պէս ճէպ ճերմակ է, սեւ աչվի սեւ իքվի, օրթան ալ իմ պէնկիս պէս՝ պէնկ մը ունի, պոյը ըսես նէ՛ սէվլի կլմանի, անանկ համարաթ է անանկ մարիֆէթլի է անանկ ձեռքը չարուս է քի օրը երկու խասնախ սիւզէնի կը պանի, էրէսին ալէրը բիւթիւն կէտինը կը թափի, տարիքը հարցունելու ըլլաս նէ գիշերները հիսապի չառնելով՝ խտրէլէզը կանէ թամամ քսանը ութը տարու կըլլայ: Պիւլպիւլ մի ըսեմ՝ խանարեա մի ըսեմ, անուշիկ ձայն մը ունի, աղւոր կազէլ սէմայի մանիներ կը կանչէ, թիւլպէնտներու պէս ճէպ ճերմակ տէ վար կախված կէտտան մը ունի քի ան աճի չէլմէսի մահալլէպիճիին արջէվէն խուեուճի չարչըսին մտնալուս պէս թէլլալ Մանիէլ մը կար, մէռած է նէ լուսերուն մէջը պառկի, ողջ է նէ ականջը խօսի, աղջիկս քալած ատենը ճէպ ճերմակ կէտտանը կախված կերերար, աս խամսըզ թէլլալ Մանիէլը էլմասին կուշը ձեռքը աղ-

ջիկանս առջեւէն երթալով՝ թիթիրէմէ կէռտանլըգ, պինէ տէի մէզաթը կը հանէր, մինչեւ որ խուեուճիներէն քարակճիները տառնայինք նէ, ան խուեուճիներուն բարլախ կըտրիճները աղջիկանս կէտտանը տասը հազարի կը հանէին, ան պասմաճիներուն թէզկեհատարները պերներնուն ճուրերը վազելով հէրեան կըլլային, իշտէ ասանկ տիւնեա կիւզէլի է ալլըման աղջիկս, կնայ տէ անոր կէօրէ մէթ ըրէ մէկիկ մէկիկ, քա քիչ մնաց կը մոռնայի կոր եաթախներս, պարճերս, խալիս մանկալս, լանպաս, թուրչիս քիւրը, չորս կլոխ լահանայ կարնէ:

X

էյ աղբարիկս այս մանակիս հետը հօտած ալ գրելով էղածները խապար տամ, մէկ էնտագէ երկու ուրուպ պոյլու պօսլու սարաֆներու թէլլալ Որդիկը, Աղբատախը նամէն երկու գանձանակ արեր մէկը կռնակը մէկն ալ ձեռքը կը պըտըտեր կոր, մարդուն մէկն ալ կռնակի գանձանակը բալթօին տակէն առնելու եղաւ, «ան իմինս է» տէի պօռաց, կռիւ մըն էր բրդաւ, իլլէ կօղցեր ես կը պօռայ մարդը, Աստուած պանը յալողէ, Առաքել աղաին քազինօէն թըֆըլ տէլիխանլը մը ելաւ, թող տուր սապատող է՝ ըսաւ, աս լախըրտըն ֆրէնկճէ ըլլալուն չի հասկըցայ:

X

Թէրէօթը մաղտանօս լահանաեան իրիճկին, Աւագ չարթույով անոր ասոր միսը ուտելով պաքդ մի ուտեր, կը գրեմ հա՛, տղիտ պերանն ալ պոնէ:

ՊԵՆԿԼԻ ԹԱԼԻԹԱ

— Քա աղջիկ ի՞նչ գլուխդ տնկեր փէնճիրէները կը նայիս, առջիդ չնայի՞ս:

— Ինչ ընեմ մայրիկ, շաքխաճին ըսաւ քի գլուխդ միշտ վեր բռնէ որ կուսո՞ղջ երեւնաս:

— Մեղայ, մեղայ տէր, ի՞նչ չար սահաք է եղեր քի տա չարխան առինք: Մօտա է տէյի աղջիկս լաղըմը պիտի իյնայ:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԻԶՄԻՐ. — «Աճպարար» բառը այսօր գրեթէ տեղւոյս ամբողջ հայ-լայֆը կ'ըզբաղեցնէ:

Ծ. Խ. — Կերեւայ թէ իզմիրցիները բաներնին գործերնին ձգած, «աճպարար» բառին հետ աճպարարներ կը խաղցնեն:

ԳԱՐԱԹԱՇ. — Նոյն իսկ Գարաթաշի մատմազէլները «աճպարար» բառէն այնքան հմայուած են, որ Սալօններու մէջ իրենց խօսակցութեան մէջ, որ միշտ ֆրանսերէն է, «աճպարար» բառը կը գործածեն:

Ծ. Խ. — Կէս գիշերէն անդիւն թէ ասդին:

ՍԿԻՒՏԱՐ. — Աստուկանաքայրոյազուրկ փնտռուող միւսիւրին կիմացնենք թէ, եթէ չարունակէ իր անտեղի լեզուն, այս անգամ ստիպուած, առանց ետին ու առջին խորհելու, ու ծածկուած քօղն ալ այլ եւս մէկդի ձգելով, անունովը լաղապովը մօտեան ֆԱՌԱԽՈՐԱՊԷՍ պիտի շտկենք: Առաջուց իմացընենիս մեր կողմանէ բարիք մը իրեն համար, ետքը առաջ գալիքին վրայինք մտածէ: Առ այժմ այսչափ:

Ծ. Խ. — Անհոգ եղէք, արդէն այդ վիպակէին կենսագրութիւնը կազմող ընդարձակ տեղեկութիւններ առած ենք: Հարկ ըլլայ նէ՛ մենք ալ պիտի տեսնուինք հետը:

ԲԵՐԱ. — Դեռատի օրիորդ մը տեսնելով որ իր նշանածը ամբողջ մեծ պահքը պահք բռնած է, ի քաջալերութիւն որոշեց իր անձը նուիրել անոր՝ աւագ շաբաթ իրիկուն ժամեր գութենէն վերջ:

Ծ. Խ. — Կարեւոր է գիտնալ թէ արդեօք օրիորդը կարմիր ներկուած է:

ԴՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Տեղւոյս վարժարանին վարժուհին աշակերտուհիներուն ապսպրեց մէկ մէկ տասնոց բերել, խոստովանութեան օրը մոմ վառելու և ասով մեղքերէ քաւուելու համար:

Ծ. Խ. — Կաթիլ կաթիլ ծով կըլլայ, տասնոց տասնոց օժիտ կ'ըլլայ:

ՂԱԼԱԹԻԱ. — Դուք ի՞նչ կուզէք ըսէք: Աւագ Հինգշաբթի օր հոս գտնուելու էիք, տեսնելու համար արանց և կանանց այն զարհուրելի բաղմութիւնը որ եկած էր մտիկ ընելու եռաձայնի երգեցողութիւնը Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ: Ներս մըտնողը դուրս չի կրցաւ ելնել և դուրս մնացողը ներս չի կրցաւ մտնել:

Ծ. Խ. — Ո՞վ ըսաւ թէ միայն եռաձայնը մտիկ ընելու համար եկած է այդ բաղմութիւնը: Զըլլա՞յ որ նոր օռկանօն մտիկ ընելու եկած ըլլան ատոնք, որովհետեւ լրագիրները գրեցին թէ հաւատացեալ մը օռկանօ մը նուիրեր է Ղալաթիոյ եկեղեցիին: Ու մտածել թէ շատ մը եկեղեցիներու մէջ չէնք շնորհք պատարագիչ քահանայի զգեստ մը անգամ չունինք, և մեր ունեւորները օռկանօ նուիրելու կելլան եռաձայնը աւելի կանոնաւոր երգուելու համար, հակառակ Ս. Պատրիարք Հօր՝ եկեղեցիներու մէջ օռկանօ մտցուելու մասին դրած բացարձակ արգելքին:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Գործակալ Ասա-բազար. — Ձեր վերջին խոստումին կը սպասենք:

ՕՔ ՆՈՔ

ԼՈՒՔ ՆՈՔ

ՈՏԱՆԱԾՈՔ

Մեր, երեսասարդ, պատանի, մանկիկ,
Ամենք գոչեն, Հասի՛կ է, Հասի՛կ.
Ընկեր ընկերին ու մըսերիմին
Ձեռքը կը բոբոռ, գուարք խնդագին.
«Հանրագիտակ»ի մեր հմբագրութիւն,
Բաժանորդներուն, ընթերցողներուն
Մաղթե վայելել Հասիկը բարեաւ.
Քանզի այսօր իսկ Քրիստոս Եարեաւ.
Քրիստոս յարեաւ, իրիստներէս,
Միսեֆերնիոյ քերէք Փրկչին մեծ պատու,
«Երանի անոնց, որոնք կ'ողորմին
Որքին, այրիին, աղիւս սքանկին, »
Ու ձեր հրճուանքին ըրէք մասնակից,
Որպէս զի Եիսուս չի տայ ձեզ կըսկիծ:

X

Այս օրուան բունով մեր «Հանրագիտակ»
Երրորդ ամիսը բոլորէ շիտակ,
Աշխատակիցներ յուրը եւ կատակ
Մեղուաջան ըրին քերթիս մեջ կուտակ:
Ուսի պարսք կըզգանք հրապարակաւ
Եարել անուններն անոնց հոս կարգաւ:
Նախ մեր նազելի Հանեանց Ելիզ
Ձոր տեսնողն անշուշտ պիտ' ըսէ c'est lui.
Մեր ամուսնացու Մանին Պալապան
Ուրիկ իբր յօղուած տեսնէր դեռ մեկ բան:
Այրերուն գալով Տիոն խմբագիր
Որ բանալ կուզէ մեր ամեն փակ իր:
Քասիմն ալ աշխոյժ, Միսաքը Գօջուն
Ուժով փակած է ընտանեաց պոչուն:
Հապա կարճիսիկ մերունցին Սիմոն
Թաղականներուն ֆաջախն է, շիտակ:
Մեր համակրելի Գրիգորն Համբիկ,
Նիսիք նիսք ցատկէ ուսնուսուն զամբիկ:
Մերք Գիմ, երբեմն ալ Գալուստ Նազարէք
Դեմքեր կը գծէ գրիչով վարպէս:
Կենսագիր Լեւոն հայ վարժապետաց
Վարէ գրիչըդ փիչ մ'ալ սրբնբաց:
Իսկ Լուսինեանն ուլ դու Բանագող
Կը սիրես այն կին որ ֆեզ բանայ ֆոյ:
Գրչովը խնդով, ձայնովը՝ դպիր,
Ջրարք Երմոզն է, իրեն մի՛ դպիր:

Փշրանքներ տունդ Հրաչ. Տերոսկի,
Կը խառնելի լոկ գիտութեան խօսքի:
Ներշնչութիւն հապա՞, ժիր զաւեշագիր,
Կրծէ կիներու միսը հեշտակիր:
Մոռնալ կըլլայ մի Պեկիկ Թալիդան,
Կարծր է հաւատքի, ինչպէս կաշեբան:

X

Վահա՛ն վարդապէս, Պատուաւա՛ն Հայր սուրբ
Է՛ր չի խորհեցար փիչ մ'աւելի նուրբ,
«Լոյս» քերթըդ ըրիր հաւատքի ֆարոյ,
Որ մեզը յայտնէ գաղափա՛ր մորոս:
Ինչո՞ւ բոյլ տրիր, հի՛, ըսէ՛, ինչո՞ւ,
Մեր լոյս հաւատքին բառեր անարգու,
Բարգէն վարդապէս չեղա՞ւ անարգիչ,
Երբ կը գրէ քե մեր Լուսաւորիչ՝
«Հայերէն լեզունով չէր գրէր խօսք»,
Քանզի չէ՞ ասի հաւատքի հիմեր:
Իսկ ֆեզ կը վայի՞, ֆեզի՛ եւ Բարգէն,
Մե՞ղք որ եղած ես մեր դպրեմանին,
Հաց կերար դուն հոն, ուսում առիր որ
Անարգա՞նք քերես անունին անոր:
Բայց ըսէ՛ տեսնել, ըսէ՛ եսասեր,
Լուսաւորիչը Զինարէ՛ն խօսք:
Բայց... ի՞նչ հարկ կայ որ ֆեզի պէս մեկուն
Խեղճ դրնէ, խօսիմ իբրեւ մարդ խոհուն
Ս. Պատրիարք մեր, փաստով ջախջախիչ,
Անշուշտ կը կարկէ լեզուն ու գրիչ:

X

Հալաքիոյ մեր սուրբ եկեղեցիին
Խնամակալութիւնն խորհուրդով խորհին,
Որոշում տուաւ վերջընէր պրնակ,
որուն ամեն ոք ցուցուց մեծ փափակ:
Միայն պրնակ մը դրաւ մեջ բակին
Որ ուխտաւորներ հոն նետել հաճին,
Թէ յօժարակալ կ'ուզեն նուրբ տալ,
Նուրբ սրբագին ու Աստուծոյնկալ:
Այսպէս եղած է արդեմ Օրթագիւղ
Ինչպէս Գաւրգիւղ, գուցէ ուրիշ գիւղ:
Մաղթելի է որ այս շաւ դրութիւն
Ամեն կողմ գտնէ ընդունելութիւն:

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտեօի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ մենդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆորներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, գնահատուած համբաւաւոր բժիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից միջերանոցներու քով:

50—37

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԱԵԼԻՆԱՅ

Արսնց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաչեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիններու անմըցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց խոշորիկներու և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկաներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—31

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ փաստա-

կար նիւթերէ բոլորովին զերծ է:

Յիշեալ ջուրը մաշեցնելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եղած հրահանգները տրուած են. ասկէ զատ ձերիտի վեգաի Թըպպիյէի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են:



Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառուջիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշեցնելու համար դիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատտէօի, յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, որ պիտի գրանցէ՛ք մաքուր ջուր ձեր մաշեցնելու գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուղեղ-րութիւն ընել Ա. Սօղանճեանի ստորագրութեամբ:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուղեղ-րութիւն ընել Ա. Սօղանճեանի ստորագրութեամբ:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօրի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէներ, ամերիկեան կօշիկներ և Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար:

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել:

Վաճառատունն հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՏ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները:

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-27

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են: